ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

МАРЗПЕТ АРАРАТА

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 13

ք. Արտաշատ

«02» 02 2016թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ 2016 ԹՎԱԿԱՆԻ 1-ԻՆԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 77.1 և 77.2 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.27-րդ - 1.40-րդ կետերով և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2014 թվականի դեկտեմբերի 27-ի N282-Ա հրամանով

Որոշում եմ՝

1. 2016 թվականի 1- ին եռամսյակում մարզի համայնքներում իրականացնել վարչական հսկողություն համաձայն հավելվածի:

2. Վարչական հսկողության իրականացման գործընթացում ղեկավարվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2016 թվականի հունվարի 25-ի N 1/32.1/727-16 հանձնարարականով ներկայացված՝ համապատասխան ոլորտի պետական լիազորված մարմնի և իրավական հսկողության բարձրագույն մարմնի համատեղ հրամաններով հաստատված Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից իրականացվող վարչական հսկողության հարցաշարով:

3. Աշխատանքային խմբի ղեկավարին՝ յուրաքանչյուր համայնքում վարչական հսկողություն իրականացնելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, իրավական հսկողության բարձրագույն մարմնի կողմից հաստատված օրինակելի ձևին համապատասխան կազմել արձանագրություն:

4. Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա առաջին տասնօրյակում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն ներկայացնել տվյալ եռամսյակում իրականացված վարչական հսկողության արդյունքում կազմված արձանագրությունները:

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի
«02» փետրվարի 2016 թ. թիվ 13 որոշման

2016 ԹՎԱԿԱՆԻ 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԸ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

Համայնքի անվանումը	Իրականացվող վարչական հսկողության ժամանակահատվածը	Իրականացվող վարչական հսկողության բնագավառները	Վարչական հսկողություն իրականացնող աշխատանքային խումբ Զբաղեցրած պաշտոն (աշխատանքային խմբի ղեկավար, անդամ
ուղի, Գինեվետ, Վարդաշեն	02.02. - 04.02.. 2016թ. 05.02. – 09.02 .2016թ. 10.02. - 12 .02. 2016թ. 2013-2016թթ.	Տեղական ինքնակառավարման բնագավառ Արտակարգ իրավիճակների բնագավառ Պաշտպանության բնագավառ Ոստիկանության բնագավառ Քաղաքաշինության բնագավառ Հողօգտագործման բնագավառ Առևտրի և ծառայությունների բնագավառ Ֆինանսական բնագավառ Իրավական բնագավառ	Խմբի ղեկավար՝ Լալայան Ալինա Անդամներ՝ Հովհաննիսյան Էլյանորա Թարվերդյան Ռաֆիկ Գևորգյան Գևորգ Միսակյան Ոսկան Գրիգորյան Վարուժան Միքայելյան Մուրադ

Աշխատակազմի ղեկավար՝ Ս. Հովհաննիսյան